Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 08

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<01>> օգոստոսի 2025թ. ք. Երևան

2025 թվականի օգոստոսի 1-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Պ. Գալստյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 3 դիմումների քննարկում:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

3. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիաները և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումների քննարկում:

Քննարկվեցին՝

Նարիա Մելիք-Սարգսյանի 27.07.2025թ. դիմումը՝ ԱՁ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00075 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին, «ՀԱՄԱՋ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 01.08.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00108 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ՏԵԽԱՎՏՈՑԵՆՏՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 01.08.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00043 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Նարիա Մելիք-Սարգսյանի 27.07.2025թ. դիմումը՝ ԱՁ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00075 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին, «ՀԱՄԱՋ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 01.08.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00108 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ՏԵԽԱՎՏՈՑԵՆՏՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 01.08.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00043 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Նաիրա Մելիք Սարգսյանը ներկայացրել է հոր՝ Արամ Հարությունի Գասպարյանի պետական վկայականը մահվան մասին և խնդրել ուժը կորցրած ճանաչել ԱՁ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00075 լիցենզիան և ներդիր:

«ՀԱՄԱՋ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 01.08.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00108 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ՏԵԽԱՎՏՈՑԵՆՏՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 01.08.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00043 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին դիմումները ներկայացված են կազմակերպությունների կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումները և դիմումին կից նյութերը և լիցենզիաների և ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ	4 կողմ, 0 դեմ
«ՀԱՄԱՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ
«ՏԵԽԱՎՏՈՑԵՆՏՐ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝ անհատ ձեռնարկատեր ՀԱՄԼԵՏ ԶԱԽԱՐԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ 2025 թվականի հուլիսի 29-ի դիմումը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և ներդիրն տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության ՝ N ԳԲ 00038 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց անհատ ձեռնարկատեր ՀԱՄԼԵՏ ԶԱԽԱՐԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ 2025 թվականի հուլիսի 29-ի դիմումը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և ներդիրն տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության ՝ N ԳԲ 00038 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Պ. Գալստյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը, լիցենզիայի և ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՀԱՄԼԵՏ ԶԱԽԱՐԻ ՄԻՆԱՍՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝ անհատ ձեռնարկատեր ՆԱԻՐԱ ԱՐԱՄԻ ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆԻ 2025 թվականի հուլիսի 24-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ գործունեության նույն վայրում գործել է տեխնիկական զննության կայան՝ ԱՁ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՁ 00075 լիցենզիայով: Արամ Հարությունի Գասպարյանը մահացել է, որի վերաբերյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը ներկայացրել է դուստրը՝ Նաիրա Արամի Մելիք-Սարգսյանը: Միաժամանակ՝ ԱՁ ՆԱԻՐԱ ԱՐԱՄԻ ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆԸ 2025 թվականի հուլիսի 24-ի լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ղանդիլյան փողոց 25/1 գործունեության վայրում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՆԱԻՐԱ ԱՐԱՄԻ ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան